

NORAYR DE BUZANCE, Néandre. — De l'urgence d'une édition critique des textes arméniens. Roma, 1892. (ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԿԱՅԻ. — Հալոցք բնագիրների մի քննադատական հրատարակութեան անհրաժեշտութեան մասին): Արտատպւածք „Reale Accademia dei Lincei“ ակադեմիայի նիստերի հաշից. նիստ առ 18 դեկտեմբերի 1892 թ.):

Իւր ալս բրոշուրով պ. Նորայր Բիւզանցացին պնդում է որ անհրաժեշտ է հալոցք հին մատենագիրները հրատարակելուց և նոցա քննադատելուց առաջ՝ ձեռագիրները նախ քաղցատել և աղպիսով վերականգնել իսկական բնագիրները, և որ միայն իսկական բնագիրները հրատարակելուց վետոյ կարելի է կազմել հալոցք դրաբաւի քերականութիւնը և բառարանը: Այդ կողմից, ասում է հեղինակը, ամեն ինչ նոր պիտի սկսել՝ Հալոցք պատմութիւնը, աշխարհագրութիւնը, ժամանակագրութիւնը, քերականութիւնը և բառարանը, որպէս նաև հին գրականութեան պատմութիւնը: «Այժմէ Զամչեանի, Ինճիճեանի, Աւգերեանի և Բագրատունու աշխատութիւնները, որ շատ գնահատելի են իրանց ժամանակի համար, ալ ևս չեն կարող մեզ լիովին ծանօթացնել մեր ազգի հին պատմութեան, մեկ երկրի աշխարհագրութեան և մեր հին բարբառի հետ, միւս կողմից ալնպիսի գրքեր ինչպէս հայր Զարբանալեանի Մատենագրութիւն Հալոցք և Նորա աշխատութիւնը հին հալոցք թարգմանչական գրականութեան մասին կարող են շփոթեցնել որոնողներին իրանց անլիակատար կամ անճշդ

տեղեկութիւններով:

«Իմ հալոցքակիցներին դողելու համար, որ ձեռնարկւի հալոցք մատենագիրների քննական հրատարակութեանը, ես կ. Պոլսում, 1880 թւին, հալոցք լեզուագիտութեան մի փորձ հրատարակեցի՝ Հակական բառաքննութիւն վերնագրով: Եթ տարի վետոյ ես սկսեցի հրատարակել Ստոկհոլմում, մի համեստ հանդէս «Քննասէր» անունով, որը ես նշանակել էի հալոցք լեզվին և գրականութեան վերաբերեալ խնդիրների համար: Առաջին տետրը լուս տեսաւ 15 մայիսի 1887 թ., և երկրորդն ու վերջինը՝ 3 դեկտ. նոյն 1887 թ.»:

Բալց հեղինակը չպտնում է թէ իւր դիտաւորութեան իրագործումը դեռ ամենից առաջ կախած է նրանից, թէ որքան ազատ մուտք կ'ունենալ ինքը բոլոր մասնաւոր գրադարանների մէջ:

«Ես կարծում էի թէ թերեւ որ և է ծառայութիւն մատուցած կը լինէի օտար հակաբաններին, եթէ մի հատորով ամփոփէի ալն բոլոր արքագրութիւնները, որ ես ունեւարած մեր հին մատենագիրների մասին: Աւստրիայում Ֆրիդրիխ Միւլլէրն է, որ կը ցանկար Կոբլենցի «Ալարք Սրբուն Մաշտոցի» և Թոմաս

Արծրունու Պատմութեան ձեռագիր-
ները բաղդաստել. խտալիալում պրոֆ.
Տէգա՛ն է որ կ'ուզէր Ղազար փար-
պեցու Պատմութեան և Ստոյն կա-
լէսթինէսի նոր հրատարակութիւնը.
Ֆրանսիալում պրոֆ. Ա. կարրիէրը
և Անգլիալում Գ. Ա. Շրումֆը գոհ
չեն Սերէտի Պատմութեան երկու
հրատարակութիւններով:

«Արդ, ես ուսումնասիրել եմ արդ
և շատ ուրիշ հեղինակներին» «Նախ-
նիք» խորագրով մի գրքում, որի
համար ես աշխատում եմ ամեն եռամ-
սով և ութով. իմ աշխատութիւնը
ընդգրկում է 13 դար, սկսած Եզ-
նիկի «Եղծ Ազանդոց» գրքից (Մ. րդ
դար) մինչև Զաքարիա սարկաւազի
«Պատմութիւնը» (XVII-րդ դար).
Առանց չաւանդութիւն ունենալու
բոլոր մթութիւնները լուսաբանած
լինելու, ես, սակայն, լոյս ունեմ, որ
թւով 10.000 սրբագրութիւններ կ'օգ-
նեն որ արդ մատենագիրներին աւելի
լաւ հասկանանք և ուղղենք բազմա-
թիւ սխալ կարծիքներ, որ ունեցել
են ցարժման կրիտիկոսները:

Պր. Նորայրը ապա թւում է ալն
բոլոր 20 հղանակները, որոնց մի-
ջոցով նա ուղղագրում է սխալները
և բերում է մի քանի օրինակներ

իրը նմուշ. Ալսպէս Մովսէս Խորե-
նացու տպագրութեան մէջ Արգա-
մոզան անունը պ. Նորայրը ուղղում
է Արդամուան, իբր աղաւաղումն Ադ-
րամէլի կամ Ադրամելէքի:

Նոյնպէս Խորենացու ալս խօսքը՝
Ասի թէ Արտաշէս Ոքոզ մասն ինչ
ի Հռոմալեցոցն և ի Հրէից առեալ
ընակեցոյց վրան օք առ կասրից,
պ. Նորայրը ուղղում է ալսպէս՝
Ասի թէ Արտաշէս Ոքոզ մասն ինչ
ի Հռոմալեցոց և ի Հրէից առեալ
ընակեցոյց առ Վրկան աւք կաս-
րից»:

Անանիայ Շիրակեցու ալս տողը՝
Արիստիդէս Մերրի փիլիսոփայ Աթե-
նացի...», պ. Նորայրը ուղղում է՝
«Արիստիդէս՝ մեր իրի (ալսինքն
մեր հաւատի) փիլիսոփայ Աթենացի»:
Սև ամեն մի սրբագրութեան հա-
մար պ. Նորայրը բերում է արդա-
րացնող հիմունքներ:

Հիմնաւոր են արդեօք բոլոր
10.000-ի չափ սրբագրութիւնները
թէ ոչ, բայց պ. Նորայրի «Նախնիք»
աշխատութեանը մեծ հետաքրքրու-
թեամբ պիտի սպասեն հալագէտ-
ները:

Ա.